ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 սեպտեմբերի 2022 թվականի N 349-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N187-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման աշխատանքային խմբերի անհատական կազմերը ՝ համաձայն հավելված N 3-ի

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման

հանձնաժողովի կանոնադրությունը և տարահանման հանձնաժողովի ու աշխատանքային խմբերի անհատական կազմերը հաստատելու մասին» N 187-Ա որոշումը:

01.09.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: ՂՈՒԿԱՍՅԱՆ ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ.սեպտեմբերի 1
ք. Կապան

Հավելված N1
Սյունիքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 1-ի
N349Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի (այսուհետ՝ Տարահանման հանձնաժողով) սույն կանոնադրությունը սահմանում է խաղաղ պայմաններում, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրները, իրավունքներն ու պարտականությունները:
2. Տարահանման հանձնաժողովը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի (այսուհետ՝ մարզպետ) որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:
3. Տարահանման հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզպետը: Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է մարզպետի տեղակալի՝ Տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:
4. Տարահանման հանձնաժողովն աշխատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպամեթոդական ապահովումը:
5. Տարահանման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն, 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N824-Ն որոշումներով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

II. Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրները ամենօրյա գործունեության ընթացքում

6. Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակների ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության, նյութական և մշակութային արժեքների

վտանգավոր տարածքներից տարահանման, տեղաբաշխման և ապահովման միջոցառումների պլանավորումը, բնակչության տարահանման մարզային պլանի մշակումը և սահմանված պարբերականությամբ դրանց ճշգրտումը.

2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարահանվող բնակչության տեղաբաշխման վայրերի և տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանների մշակումը և նախատեսված միջոցառումների իրականացումը

3) Տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ գործողությունների իրականացման պլանների մշակման, տարահանման միջոցառումների անցկացման պատրաստության գործընթացի վերահսկողություն.

4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Ազգային անվտանգության ծառայության, ԱԱԾ սահմանապահ զորքերի հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով.

5) Մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններում՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրատեսականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձերքբերման նպատակով.

6) Տարահանման հանձնաժողովի նիստերում տարահանման միջոցառումների, պլանների և տարահանման մարմինների պատրաստականության վերաբերյալ հարցերի քննարկումը:

7. Քաղաքացիական պաշտպանության համակարգը խաղաղից ռազմական դրության ռեժիմին անցնելու դեպքում՝

1) Բնակչության տարահանման, նյութական և մշակութային արժեքների ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում.

2) Կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման պատրաստականության վերահսկողություն.

3) Տարահանվող բնակչության թվաքանակի, նյութական և մշակութային արժեքների ծավալների և կարգի ճշգրտում.

4) Բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման վերահսկողություն.

5) Վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման վերահսկողություն.

6) Առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն:

8. Տարահանման աշխատանքներ իրականացնելու կարգադրություն ստանալու դեպքում՝

1) Տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանն անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների վերահսկողություն.

2) Տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն.
3) Սահմանակից մարզերի հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով.
4) Տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում.
5) Տարահանման պլանների ճշգրտման և կատարման առաջարկությունների մշակման վերահսկողություն.
6) Բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաքագրում և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:
9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ծագման սպառնալիքի դեպքում՝
1) Տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում.
2) Կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում.
3) Տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում.
4) Տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում.
5) Տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն.
6) Առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն.
7) Անվտանգ վայրում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:
10. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալու դեպքում՝
1) Տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում.
2) Տրանսպորտային ապահովման կազմակերպում.
3) Բաժնեչափական հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկական և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում.
4) Տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրերի տեղափոխման կազմակերպում.
5) Բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Տարահանման հանձնաժողովի իրավունքները

11. Տարահանման հանձնաժողովն իրավունք ունի՝
1) Իր իրավասությունների շրջանակներում ընդունել որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ.
2) Ուսումնասիրման և որոշումների ընդունման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, հաստատություններից կատարել հարցումներ և ստանալ անհրաժեշտ տվյալներ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի վերաբերյալ.
3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերը քննարկել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց հետ, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ.

4) Տարահանման մարմինների գործունեության վրա սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, ԱԻՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության մասնագետների հետ:

IV. Տարահանման հանձնաժողովի կառուցվածքը

12. Տարահանման հանձնաժողովի կազմակերպման կառուցվածքում ընդգրկվում են՝

1) Վտանգավոր տարածքներից բնակչության դուրս բերման և հաշվառման խումբ.

2) Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման և հաշվառման խումբ.

3) Բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման և հաշվառման խումբ.

4) Տրանսպորտային միջոցներով ապահովման խումբ.

5) Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

13. Տարահանման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կազմակերպությունների, տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Տարահանման հանձնաժողովի աշխատանքային կարգը

13. Տարահանման հանձնաժողովն իր աշխատանքները ռազմական դրություն հայտարարելու և արտակարգ իրավիճակների ժամանակ կազմակերպում է նիստերի ձևով, որոնք գումարվում են, ինչպես Տարահանման հանձնաժողովի նախագահի, այնպես էլ Տարահանման հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ: Ձայների հավասարության դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

14. Տարահանման հանձնաժողովի նիստերն անց են կացվում առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ Տարահանման հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ, առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացվել Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի ղեկավարությամբ՝ արահանման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

15. Տարահանման հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Տարահանման հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է Տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ և հաստատվում է Տարահանման հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Տարահանման հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են Տարահանման հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում Տարահանման հանձնաժողովի նախագահի և Տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից:

17. Տարահանման հանձնաժողովի նախագահը՝
1) հանդիսանում է Տարահանման հանձնաժողովի անդամների և մարզային Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարը, նրա իրավասության սահմաններում ընդունված որոշումները (հրահանգները) ենթակա են կատարման Տարահանման հանձնաժողովի անդամների կողմից.
2) պատասխանատու է ռազմական դրության և արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման միջոցառումների պլանավորման և իրականացման համար.
3) սահմանում է Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի և Տարահանման հանձնաժողովի անդամների պարտականությունները.
4) խաղաղ ժամանակ՝
ա. կազմակերպում և հսկողություն է իրականացնում բնակչության տարահանման պլանավորող փաստաթղթերի մշակման և ժամանակին ճշգրտման նկատմամբ,
բ. հսկողություն է իրականացնում տարահանված բնակչության տեղավորման և առաջնահերթ ապահովման պատրաստության նկատմամբ,
գ. ապահովում է տարահանման միջոցառումների պլանավորման փոխգործողությունների իրականացումը պետական կառավարման մարմինների հետ.
5) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ՝
ա. հսկողություն է իրականացնում տարահանման մարմինների պատրաստականության բերման միջոցառումների կատարման նկատմամբ,
բ. ելնելով իրավիճակից հրավիրում է Տարահանման հանձնաժողովի նիստեր տարահանման միջոցառումների պլանավորման, իրականացման և ապահովման հարցերով.
6) տարահանման վերաբերյալ որոշում ստանալուց հետո՝
ա. ղեկավարում է տարահանման մարմինների գործունեությունը տարահանվող բնակչության ազդարարման, հավաքի և անվտանգ տարածքներ տեղափոխման ուղղությամբ,
բ. հսկողություն է իրականացնում տարահանման ընթացքի, տվյալների հավաքման նկատմամբ,
18. Տարահանման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Տարահանման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը:
19. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ Տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:
20. Տարահանման հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետներ՝
1) Աշխատանքային ժամերին՝ 30 րոպե.
2) Ոչ աշխատանքային ժամերին՝ 1 ժամ 30 րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):

9/1/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. սեպտեմբերի 1-ի
N 349 Ա որոշման

Կազմ

Սյունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի

Հ. Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ս. Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ն. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ն.Գևորգյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Մ. Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ա. Մարտիրոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
Հ. Կարախանյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Է. Բունիաթյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
Ա. Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ:
Ս. Աղաբեկյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Է. Միրզոյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ
Ա. Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

Զ. Վարդանյան — ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայության գծով պետի տեղակալ (համաձայնությամբ)

Յու. Պետունց — «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ)

9/1/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

Է. Մարտիրոսյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար

ՀԱՎԵԼՎԱԾ N3
Սյունիքի մարզպետի
2022թ. սեպտեմբերի 1-ի
N - 349 Ա որոշման

Կազմ

Սյունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման և հաշվառման խումբ

Ժ. Թունյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, խմբի ղեկավար
Մ. Զախարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Համբարձումյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի ավագ մասնագետ
Ա. Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման և հաշվառման խումբ

Հ. Մնացականյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ, խմբի ղեկավար
Ի. Բալայան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ
Թ. Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Աբրահամյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

3.Բժշկական հաստատությունների անձնակազմերի և հիվանդների անվտանգ դուրս բերման և հաշվառման խումբ

Ա. Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, խմբի ղեկավար
Տ. Սարգսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետ

Բ. Պետրոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետ
Վ. Արզումանյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ

4.Տրանսպորտային միջոցներով ապահովման խումբ

Ս. Աղաբեկյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, խմբի ղեկավար
Ի. Հայրապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
Մ. Աղախանյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի մասնագետ

5.Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ

Վ. Բաղդասարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի ղեկավար
Ժ. Նավասարդյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Բաղդասարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ֆինանսատնտեսագիտական բաժնի մասնագետ:

9/1/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**